

ԱՆՁՆԱԿԱՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՇԱՀԵՐԻ
ՓՈՆԷՀԱՐԱՐԵՐՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՁ

ՀՈՎՍԵՓ ԱՂԱՋԱՆՅԱՆ

Սուբյեկտի գործունեության առաջին պայմանը նրա պահանջմունքներն են՝ անկախ հարաբերությունների բնույթից: Մարդկանց պահանջմունքները կարող են լինել նյութական և հոգևոր, որոնց բավարարման համար նրանք մտնում են անհրաժեշտ հարաբերությունների մեջ: Այդ պահանջմունքներից էլ ձևավորվում են նրանց շահերը: Անձնական շահը այդ օբյեկտիվ պահանջմունքների արտացոլումն է գիտակցության մեջ, որը դրանց համապատասխան սուբյեկտին նպատակամղում է որոշակի գործունեության: Անձնական շահն ունի օբյեկտիվ բնույթ, քանի որ ձևավորվում է օբյեկտիվ հարաբերություններում: Բայց անհատի գործունեությունը, որի հիմքում ընկած են օբյեկտիվ պահանջմունքները, ունի ինչպես օբյեկտիվ, այնպես էլ սուբյեկտիվ կողմեր: Գործունեության օբյեկտիվ կողմը սուբյեկտի սոցիալական դրությունն է, այն հարաբերությունները, որոնցում նա գործում է և որոնք սուբյեկտի գործունեության համար առաջադրում են իրենց համապատասխան շահանիշները, իսկ սուբյեկտիվ կողմը՝ իդեական շարժիչ ուժերը (գործունեության մատիվները), որոնք, կախված լինելով սուբյեկտի ընկալման աստիճանից, կարող են ունենալ արժեքավորման տարբեր շահանիշներ, ուստի և մակարդակներ: Հետևապես անհատի գործունեությունը նրա ներքին էության և օբյեկտիվ իրականության արտացոլման միասնությունն է, որն արտահայտվում է նրա նյութական և հոգևոր պահանջմունքների բավարարման մեջ:

Անհատների (որոնք ունեն իրենց շահերը) անհրաժեշտ փոխհարաբերությունից էլ ձևավորվում է հասարակական շահը: «Ամենուրեք պատմության մեջ զբնդհանուր շահը» ստեղծվում է անհատների կողմից, որոնք որոշակիված են որպես «անհատական մարդիկ»¹ և «միակ կապը, որը միավորում է նրանց (անհատներին—Հ. Ա.), բնական անհրաժեշտությունն է, պահանջմունքը և անհատական շահը...»²: Այդ պրոցեսը համընդհանուր է տնտեսական բոլոր ֆորմացիաների համար: Եթե գոյություն ունի հասարակություն, ապա կա նաև հասարակական շահ, որն ապահովում է անհատների միջև գործող հարաբերությունները: Դա այն օղակն է, որի միջոցով անհատներն այս կամ այն ձևով համակցվում են, և որով էլ պայմանավորվում է հասարակության՝ որպես առանձին համակարգի, գոյությունը: Այլ բան է, որ դասակարգային կառուցվածք ունեցող հասարակարգերում սոցիալական խմբերի շահերն ունեն տարբեր բնույթ: Վերջին հաշվով այդ սոցիալական խմբերի միջև կա որոշակի համընդհանուր կապ, որն արտահայտվում է տարբեր ձևերով: Բայց որն է այդ ընդհանուր կապը. դա տվյալ արտադրական հարաբերություններին համապատասխան որոշակի շահերի համընդհանրությունն է (իհարկե, իրենց ներքին որոշ փուլում անլուծելի հակասություններով հանդերձ): Այդ համընդհանուր կապի գոյությունը հասարակականորեն անհրաժեշտ է, որի ներգործության հետևանքով էլ ձևավորվում է հասարակական շահը: Իսկ որն է հասարակական շահի ձևավորման հիմքը: Անդրադառնալով այդ հարցին, Կ. Մարք-

¹ К. Маркс, Ф. Энгельс, Соч. т. 3, с. 236.

² К. Маркс, Ф. Энгельс, Соч., т. 1, с. 401.

սր գրել է. «ընդհանուր շահը գոյություն ունի ոչ միայն պատկերացման մեջ, որպես «համընդհանուր», այլ ամենից առաջ այն գոյություն ունի իրականության մեջ, որպես կախում այն անհատների, որոնց միջև բաժանված է աշխատանքը»³։ Այսինքն՝ հասարակական շահը որոշակի փոխկապվածություն է անհատների, սոցիալական խմբերի միջև, որի հիմքը աշխատանքի հասարակական բաժանումն է։

Անձնական և հասարակական տնտեսական շահերի ձևավորման և փոխհարաբերության մեխանիզմը պետք է դիտել ունի և կոնկրետ պրոցեսների մեջ։ Ա. Բուզակովյան գտնում է, թե աարդյունքը, որը սպառվում է ամբողջությամբ հասարակության կողմից, բոլոր աշխատողների հասարակական շահի օբյեկտն է։ Արդյունքը, որը սպառվում է սոցիալիստական ձեռնարկություններում, բոլոր աշխատողների կողմից շահի օբյեկտ է ծառայում։ Արդյունքը, որը սպառվում է առանձին անհատների հայեցողությամբ, հասարակության մասշտաբով բոլոր անհատների անձնական շահերի օբյեկտն է⁴։ Այստեղ, սակայն, անձնական, կոլեկտիվ և հասարակական տնտեսական շահերի ձևավորման մեխանիզմի տրամաբանական կապվածությունը հիմքը ճիշտ չի մեկնաբանված։ Նախ՝ հեղինակը պետք է անձնական տնտեսական շահերից ընթանաբար դեպի հասարակականը և ոչ թե հակառակը։ Հասարակական շահն այդ անհատների որոշակի փոխհարաբերությունն է, որոնք գործում են, ելնելով իրենց անձնական շահերից։ Այդ տեսակետից նախքան հասարակական շահը անհրաժեշտ է անհատների շահերի գոյությունը։ Բացի այդ, Ա. Բուզակովյան ախալվում է, երբ անձնական, կոլեկտիվ և հասարակական տնտեսական շահերի ձևավորման հիմքում դնում է արդեն ստեղծված արդյունքը։ Նախքան արդյունքի ստեղծումը, որն օգտագործվում է հասարակության անդամների պահանջ-մունքների բավարարման համար, հասարակության անդամների միջև անհրաժեշտ են որոշակի հարաբերություններ։ Մինչդեռ Ա. Բուզակովյան միանգամից հասարակական, կոլեկտիվ և անձնական շահերի ձևավորման հիմքում դնում է արդեն ստեղծված արդյունքի սպառումը։ Իսկ Գ. Տամոշինյան նշում է, որ «եթե համաժողովրդական շահը դիտարկենք որպես հասարակության շահի միայն մի մասը, ապա այն կապված չէ ամբողջ հասարակական արդյունքի հետ, այլ միայն կապված է այն մասի հետ, որը սպառված է կենտրոնացված բաշխմանը և սպառմանը (հասարակական սպառման ֆունդին—Հ. Ա.)։ Հասարակական արդյունքի մյուս մասը իրենից ներկայացնում է բոլոր աշխատողների կոլեկտիվ և անձնական շահերի հիմքը»⁵։ Այսինքն՝ հեղինակը զրտնում է, որ հասարակական շահի ձևավորման հիմքն անհրաժեշտ արդյունքի այն մասն է, որն օգտագործվում է հասարակական սպառման ֆունդերի ձևավորման համար, իսկ կոլեկտիվինը՝ այն մասը, որն ի սպաս է դրվում կոլեկտիվ սպառմանը, իսկ անձնականինը՝ անձնական սպառմանը հատկացվող մասը։ Այսպիսով, Գ. Տամոշինյան հասարակական շահի ձևավորման հիմքում դնում է հասարակական սպառման ֆունդը։ Ըստ նրա, եթե ամբողջը չձևավորվի, ուրեմն հասարակական շահ գոյություն չի ունենա։ Անձնական և հասարակական շահերն իրենց ներքին հակասություններով հանդերձ օգտանապես փոխկապակցված են։ Անհատական սպառման համար օգտագործվող ամեն մի արդյունք ամբողջ հասարակական հարաբերությունների, կամ, որ նույնն է, հասարակական արտադրության արդյունք է։ Նախքան անհատական սպառումը, այդ արդյունքի արտադրությունն անցնում է մի շարք պրոցեսներով, որն արտահայտվում է այդ անհատների որոշակի հարաբերություններով։ Հենց դրանցում էլ ձևավորվում է հասարակական շահը։ Եթե չլինեին հասարակական այդ բարդ հարաբերությունները, որոնք ուղղված են այս կամ այն արժեքի

³ 4. Մ ա Ր Զ ս և Ֆ. է ն գ ե լ ս, Ը ն տիր երկեր, Կ. 1, Երևան, 1972, էջ 32։

⁴ А. Д. Бугакова, Г. И. Тамошина, Обобществление труда и экономические интересы в развитом социалистическом обществе, Воронеж, 1979, с. 77—78.

⁵ Նույն տեղում, էջ 80։

ուտեղծմանը, ապա նախ, տվյալ արդյունքը, որն օգտագործվում է կոնկրետ անհատների անձնական սպառման համար, չէր ստեղծվի, և ապա, վերջին հաշվով, հասարակական սպառման ֆոնդի օգտագործումն իր կոնկրետության մեջ անհատական է: Այդ տեսակետից Գ. Տամոշինյան տնտեսական շահերի փոխհարաբերության և դրանց ձևավորման հիմքը բացահայտում է՝ ելնելով ոչ այնքան ռեալ հիմքերից:

Այժմ անցնենք կոնկրետ անձնական և հասարակական տնտեսական շահերի փոխհարաբերության քննարկմանը: Հասարակական հարաբերություններն ունեն հիերարխիկ կառուցվածք: Այդ հիերարխիայի տարբեր մակարդակների գործողությունը պայմանավորված է նրա ելակետային մակարդակի շարժից: Այդ ելակետային մակարդակն անհատներն են (իրենց պահանջմունքներով): Նրանք այն կոնկրետ օբյեկտներն են, որոնց միջոցով իրականացվում են հասարակական հարաբերությունները, որտեղ և ձևավորվում են անձնական, կոլեկտիվ ու հասարակական շահերը: Բայց այդ հարաբերություններում «ամեն մարդ հանդես է գալիս որպես և՛ իր, և՛ հասարակական շահերի կրող»⁶: Այդ շահերը գտնվում են որոշակի ներդաշնակ միասնության մեջ, իրենց ներքին, զարգացման որոշ աստիճանում անլուծելի հակասություններով հանդերձ: Դրանք գոյություն ունեն հասարակական-տնտեսական բոլոր ֆորմացիաներում:

Անձնական և հասարակական տնտեսական շահերի մեկուսի դիտարկումը կրում է գուտ պայմանական բնույթ: Երևույթը ճանաչելու համար այն պետք է վերցնել ամբողջության և պրոցեսի մեջ, որտեղ նրա բաղադրիչները հանդես են գալիս փոխհամաձայնված ձևով: Այդ ամենը վերաբերում է նաև անձնական և հասարակական շահերի փոխհարաբերությանը: Անձնական և հասարակական տնտեսական շահերի փոխհարաբերության հարցի վերաբերյալ Ա. Սմիթը գրել է. «Հետապնդելով իր սեփական շահերը, նա (անհատը—Ղ. Ա.) ավելի գործունե ձևով է ծառայում հասարակական շահերին, քան այն դեպքում, երբ գիտակցաբար է ձգտում այդ անելը»⁷: Այսինքն՝ շահերի համակարգում, որպես հասարակական հարաբերությունների շարժման առաջին ազդակ կամ սկզբնական ելակետ, կարևոր դերը պատկանում է անձնական շահերին:

Նախնադարյան համայնական հասարակարգի ժամանակ համայնքի անդամներն իրենց պահանջմունքները բավարարելու համար գտնվում էին որոշակի հարաբերությունների մեջ: Արտադրողական ուժերի տվյալ մակարդակին համապատասխան՝ համայնքի յուրաքանչյուր անդամի որոշակի անհատականությունն այս կամ այն ձևով դրսևորվում էր: Արտադրողական ուժերի զարգացման մակարդակին համապատասխան, որպես ձևավորված անհատի, նրա հարաբերական «ինքնուրույնության» աստիճանը շատ փոքր էր և նրա անձնական շահը համապատասխանում էր ողջ համայնքի ընդհանուր պահանջմունքներին: Հետևաբար, անձնական և համայնքի ընդհանուր շահերի միջև, եթե անգամ հակասություն գոյություն ունեն, ապա այն կրում էր մասնակի բնույթ: Նախնադարյան համայնական հասարակարգին հաջորդող հետագա ֆորմացիաներում անձնական տնտեսական շահի՝ որպես հասարակական հարաբերությունների ինքնաշարժման առաջին ազդակի, էությունն ավելի է ընդգրծվում:

Արտադրության ստրկատիրական եղանակի ժամանակ հարաբերությունները ինչպես տարբեր դասակարգերի, այնպես էլ միևնույն դասակարգի անդամների միջև գոյություն չունեին նրանց անձնական շահերից դուրս: Սակայն չպետք է կարծել, թե անձնական շահը ինչ-որ ընդհանուր սիստեմից մեկուսացված, ինքնուրույն գործող հասկացություն է: Այն գոյություն ունի բարդ, իրարամերժ հակասական բոլոր հարաբերություններում:

⁶ Նույն տեղում, էջ 131:

⁷ А. Смит, Исследование о природе и причинах богатства народов, М., 1962, с. 332.

Ստորկատիրոջ անձնական շահի հիմքում ընկած էին նրա նյութական և հոգևոր պահանջմունքները, իսկ ստրուկինը՝ ֆիզիկական գոյությունը: Այսինքն՝ տարբեր դասակարգերի անդամների անձնական շահերի ձևավորման հիմքը տարբեր էր, որն իշխող արտադրահարաբերությունների արդյունք էր: Անգամ իրենց գործունեության հիմքում համապետական, համաժողովրդական շահեր դնող անհատները դրանով նպատակ էին դնում իրացնել անձնական շահերը:

Ինչպես տարբեր դասակարգերի, այնպես էլ նրա առանձին անդամների գործունեության շրջանակները սահմանագծվում են՝ կախված հասարակական հարաբերությունների բնույթից: Ֆեոդալիզմի ժամանակ շահագործվող անհատների գործունեության շրջանակներն անհամեմատ ավելի լայն էին, քան ստրուկատիրական հասարակարգում: Այդ հասարակարգում ևս արտադրական հարաբերությունների հիմքում ընկած էին սոցիալական տարբեր խմբերի անդամների անձնական շահերը: Դա ավելի «տեսանելի» է դառնում արտադրական հարաբերությունների հետագա կատարելագործման ընթացքում:

Կապիտալիզմի ժամանակ հարաբերությունները հիմնականում խաչաձևվում են շուկայում: Դա այն վայրն է, որտեղ հասարակական բոլոր խավերի շահերի բախումը դառնում է բացահայտ: Շուկայում սոցիալական խմբերը, ելնելով իրենց շահերից, լուծում են տարբեր խնդիրներ: Այդ շահերի ներքին հակասությունը, որը պայմանավորված է հարաբերությունների բնույթով, անխուսափելի է, բայց այն, որ դրանք իրենց շարժման ելակետում հանգում են որոշակի անձնական շահերի, պարզ տեսանելի է շուկայական հարաբերություններում: Բնութագրելով կապիտալիստական արտադրահարաբերությունների ընդհանուր գծերը, Կ. Մարքսը գրել է. «Յուրաքանչյուր ոք հետապնդում է իր սեփական շահերը և միայն իր սեփական շահերը»⁹: Այսպիսով, բոլոր ժամանակներում հասարակական հարաբերությունների մակարդակների շարժման հիմքում ընկած են անձնական շահերը: Այդ առումով սոցիալիստական արտադրական հարաբերությունները չեն կարող բացառություն լինել: Վ. Ի. Լենինը գրել է, որ միլիոնավոր մարդկանց կարելի է տանել կոմունիզմ «ոչ թե անմիջապես խանդավառության վրա հենվելով, այլ մեծ հեղափոխության ստեղծած խանդավառության օգնությամբ, հենվելով անձնական շահի, անձնական շահագրգռվածության, տնտեսական հաշվարկի վրա...»⁹: Յու. Վ. Անդրոպովը ՍՄԿԿ Կենտկոմի 1983 թ. հունիսյան պլենումում արտասանած ճառում նշեց, որ «Առհասարակ գլխավոր արտադրողական ուժը, իհարկե, մարդն է, նրա աշխատանքային գործունեությունը: Այստեղ ես ի նկատի ունեմ ոչ միայն գիտակցական կարգապահությունը, աշխատանքի նկատմամբ ստեղծագործական վերաբերմունքը, այլև մարդկանց աշխատանքի ու դրա վարձատրության հրատակ, հմուտ կազմակերպումը»¹⁰: Իսկ աշխատանքի և դրա վարձատրության հմուտ կազմակերպումը ոչ այլ ինչ է, եթե ոչ աշխատողների անձնական տնտեսական շահի իրացման պայմանների կատարելագործում, որը կհանգեցնի նյութական շահագրգռվածության բարձրացմանը:

Այս տրամաբանական ընդհանուր օրինաչափությունից հետևում է, որ հասարակական տնտեսական ֆորմացիաների տարբերության կարևորագույն չափանիշներից է նաև այն, որ արտադրության կազմակերպման նոր ձևը անհատի գործունեության համակողմանի զրուտրման համար ստեղծում է համեմատաբար ավելի նպատարավոր պայմաններ, քան՝ նախորդը: Դա ամեն մի հասարակական տնտեսական ֆորմացիայի հաղթանակի ռեալ գործոններից է: Հասարակական հարաբերությունների կատարելագործման այլ չափանիշ, հետևապես գործոն չի կարող լինել:

⁹ К. Маркс, Ф. Энгельс, Соч., т. 46, ч. 1, ст. 99.

⁹ Վ. Ի. Լենին, ՍԼԺ, հ. 33, էջ 46:

¹⁰ «ՍՄԿԿ Կենտրոնական կոմիտեի պլենումի նյութերը», Երևան, 1983, էջ 13:

Գ. Տամոշինյան գտնում է, որ հասարակութայն զարգացման ինչ որ աստիճանում «տեղի կունենա անհատների տնտեսական շահերի լրիվ միաձուլում հասարակական շահերի հետ, և աշխատավորների անձնական տնտեսական շահերի մահացում»¹¹: Այս միտքը հեղինակը հիմնավորում է այն բանով, որ «Երբ արտադրության մասնատված շատ պրոցեսներ միաձուլվում են մեկ հասարակական արտադրության պրոցեսի մեջ, արտադրողների միջև հասարակական կապն ավելի ու ավելի է ամրապնդվում, արտադրողները միասնավորվում են մեկ ամբողջի մեջ և գործում որպես մեկ հասարակական աշխատուժ, և այդ դեպքում առկա է մեկ ամբողջի՝ ընդհանուր շահի մեջ արտադրողների շահերի միաձուլման նյութական հիմքը»¹²: Սակայն նախ՝ հասարակության զարգացման ընթացքը ցույց է տալիս, որ նյութական և հոգևոր բարիքների արտադրության ոլորտների փոխհարաբերությունը փոխվում է հօգուտ հոգևորի: Իսկ հոգևոր արժեքների արտադրության պրոցեսը միանգամայն այլ բնույթ ունի, ինչ հեղինակը գրում է նյութական բարիքների արտադրության պրոցեսում տեղի ունեցող փոփոխությունների մասին, չի կարող պնդել հոգևոր բարիքների արտադրության պրոցեսի համար: Միաժամանակ, այս տեսանկյունից արտադրական հարաբերությունները պետք է վերցնել ավելի լայն շրջանակներում՝ նրա մեջ ընդգրկելով նաև հոգևոր բարիքների արտադրության պրոցեսում առաջացած հարաբերությունները: Իսկ հոգևոր բարիքների արտադրության պրոցեսը միանգամայն այլ է: Այստեղ շենք կարող սանի, որ արտադրության հանրայնացման և ավտոմատացման աստիճանը կհասնի այն մակարդակին, որ արտադրողների միջև հասարակական կապն ավելի ու ավելի կամրապնդվի, և արտադրողները կհամախմբվեն մեկ ամբողջի մեջ ու կգործեն որպես մեկ հասարակական աշխատուժ: Հոգևոր արտադրության պրոցեսի բնույթը, սկսած այն ժամանակից, ինչ գոյություն ունի մարդկային հասարակությունը, համարյա թե փոփոխության չի ենթարկվել: Գործունեության բնույթի առումով Հոմերոսի, Դանթեի, Դոստոևսկու, Արքիմեդի, Նյուտոնի և էյնշտայնի ստեղծագործական պրոցեսների միջև ոչ մի տարբերություն չկա, չնայած այդ մարդիկ գործել են տարբեր ժամանակաշրջաններում: Իհարկե, նրանց գեղարվեստական ընկալման և երևույթների արժեքավորման շափանիշները տարբեր են, բայց գործունեության առումով, հոգեկան ապրումների դրսևորման տեսակետից նույնն են: Այդ ամենն առկա է նաև այժմ և կլինի հետագայում: Այսպիսով, նյութական բարիքների արտադրության պրոցեսի ավտոմատացումը կհանգեցնի նրան, որ հարաբերականորեն կընդլայնվի հոգևոր բարիքների արտադրության ոլորտը, որտեղ արդեն արտադրության բնույթը միանգամայն այլ է: Այստեղ կպահպանվի աշխատանքի անձնական բնույթը, որը հիմք է տալիս պնդելու, որ այդ պայմաններում անձնական շահը չի կարող վերանալ:

Բացի այդ, հասարակության զարգացման հետագա ժամանակաշրջաններում անհատներն արտադրությունից դուրս կունենան տարբեր բնույթի գործունեության ոլորտներ, հետևաբար և պահանջմունքներ: Հասարակության զարգացումը երբեք էլ չի ենթադրում, թե անհատները հետաքրքրության շրջանակները նույնը պետք է լինեն, որը կարտացոլվի նրանց պահանջմունքներում: Ուստի, հասարակության զարգացումը չի նշանակում անհատականության վերացում: Այդ անհատականությունը կարտահայտվի նրանց գործունեության ստեղծագործական բնագավառում՝ ինչպես գիտական, այնպես էլ հոգևոր ճանաչողության մեջ: Իսկ յուրաքանչյուր ճանաչողության վերջնական արդյունքը լինում է այն, որ առաջանում են նոր բնույթի պահանջմունքներ, որոնց իրացումը հասարակությանը կհանգեցնի զարգացման նոր աստիճանի: Այսինքն՝ զարգացման հիմքը դարձյալ կապվում է անհատի գործունեության հետ: Եթե պահպանվում է սուբյեկտների այդ անհատականությունը, որն արտահայտ-

¹¹ А. Д. Бугакова, Г. И. Тамошина, Եղվ. աշխ., էջ 119:

¹² Նույն տեղում:

վում է նրանց պահանջմունքներում, ուրեմն կպահպանվի նաև անձնական շահը: Այլ բան է, որ անձնական և հասարակական տնտեսական շահերի փոխհարաբերությունը գնալով ավելի ներդաշնակ բնույթ կկրի: Ուստի այն տեսակետը, ըստ որի «անձնական տնտեսական շահը հավերժական չէ՝ առաջանում է հասարակության զարգացման որոշակի աստիճանում, և դրա զարգացման որոշակի աստիճանում էլ վերանում»¹³, համոզիչ չէ:

Այսպիսով, հասարակական հարաբերությունների համակարգում անձնական տնտեսական շահերը միշտ եղել են և կլինեն որպես գործունեության առաջին ելակետ: Այդ առումով, երբ խոսվում է տնտեսական մեխանիզմի կատարելագործման, հետևապես, հասարակական արտադրության արդյունավետության մասին, այս դրան հասնել հնարավոր չէ առանց անհատների շահագրգռվածության բարձրացման, այսինքն՝ անձնական տնտեսական շահի իրացման անհրաժեշտ պայմանների ստեղծման:

Երևույթների միջև փոխհարաբերությունն առանց հակասության չի կարող լինել: Տնտեսական շահերի միջև հակասությունները բացահայտելու համար պետք է սկսել շահերը պայմանավորող պահանջմունքների զարգացման ներքին օրինաչափությունների ուսումնասիրությունից: Բ. Գերշկովիչը գտնում է, որ «արտադրության միջոցների հասարակական սեփականության բազայի վրա շահերի միջև երբեմնի հակադրությունը վերանում է»¹⁴: Իսկ ըստ Զ. Դուդիչի, «համընդհանուր հակասությունների շարքում ցայտուն ձևով առանձնանում է հակասությունն արտադրանքի քանակի ավելացման և աշխատանքային ժամերի կրճատման խթանումների, ինչպես նաև արտադրանքի քանակի մեծացման և որակի բարձրացման խթանումների միջև: Այդ երկու հակասությունները յուրահատուկ ձևով դրսևորվում են ինչպես անձնական, այնպես էլ կոլեկտիվ և հասարակական շահերում»¹⁵: Իհարկե, արտադրանքի քանակի ավելացման և աշխատանքային ժամերի փոփոխության, ինչպես նաև արտադրանքի քանակի և որակի միջև հակասություն կա, քանի որ կոնկրետ արտադրության պրոցեսում արտադրանքի քանակի և որակի միջև գոյություն ունի հակադրված կապվածություն: Բայց այդ մեխանիզմի մեջ շահերի միջև հակասություն տեսնելը համոզիչ չէ: Եարունակելով իր դատողությունները այդ հարցի վերաբերյալ, Զ. Դուդիչը գրում է, որ «անձնական նյութական շահերի խմբում հակասությունը ձևավորվում է ոչ միայն մեկ անձի խթանում մյուսին հակադրելու միջոցով, այլ նաև՝ միևնույն սուբյեկտի բազմակողմանի պահանջմունքների հետևանքով»¹⁶: Սակայն ինչպե՞ս կարող է մեկ անձի խթանումը հակադրվել մյուսին: Այդպիսի պրոցես հասարակական հարաբերություններում չի դրսևորվում: Կամ ի՞նչ կապ ունեն անհատի բազմակողմանի պահանջմունքները՝ շահերի միջև հակասության առաջացման հիմքերի հետ: Գուցե՞ հեղինակը նկատի ունի պահանջմունքների անընդհատ աճը: Բայց երբ կարողում ենք նրա հետագա շարադրանքը՝ «անձնական նյութական շահերում ամենաէական հակասությունը վերաբերում է ժամանակի և էներգիայի անձնական բալանսի և տարբեր տեսակի պահանջմունքների բավարարման հարաբերակցությանը: Ցանկացած մարդու օրվա ժամանակը կարող է բաժանվել համապատասխան նրա ձգտումների»:

...Որևէ նպատակի համար ազատ ժամանակի ավելացումը անխուսափելիորեն կրճատում է այն (ժամանակը—Շ. Ա.) մյուս պահանջմունքների բավարարման համար»¹⁷, տեսնում ենք, որ նա ամենևին դա նկատի չունի: Զ. Դու-

¹³ В. А. Медведев, Социалистическое производство, М., 1976, с. 265.

¹⁴ Б. Я. Гершкович, Экономические интересы в условиях развитого социалистического общества, М., 1975, с. 83.

¹⁵ З. З. Дудич, Экономические интересы и экономические законы в развитом социалистическом обществе, Минск, 1978, с. 64.

¹⁶ Նույն տեղում, էջ 66:

¹⁷ Նույն տեղում, էջ 67:

դիչը գտնում է, որ օրվա ընթացքում տարբեր տիպի պահանջմունքների բավարարման միջև գոյություն ունի հակասություն, որի հիմքի վրա էլ բացատրում է շահերի միջև հակասությունը:

Ի. Օբլոմսկայան և Վ. Ռադակը գտնում են, որ սոցիալիզմի պայմաններում անհրաժեշտ և հավելյալ արդյունքի, սպառման և կուտակման միջև հակասությունը կազմում է շահերի համակարգում օբյեկտիվ հակասությունների հիմքը¹⁸: Պարզ է, որ հասարակական վերարտադրության անընդհատություն ապահովելու համար նոր ստեղծած արժեքի մի մասն անհրաժեշտաբար հատկացվում է կուտակմանը: Բայց այդ ամբողջ մեխանիզմի մեջ տնտեսական շահերի միջև հակասություն տեսնելը համոզիչ չէ: Ծթն անգամ վերցնենք մի այնպիսի հասարակարգ, որը հիմնված է արտադրության միջոցների հասարակական սեփականության վրա, ապա միթե բառախաղ չէ, երբ հասարակական և անձնական շահերի հակասություն հիմքում դնում են անհրաժեշտ և հավելյալ արդյունքի միջև եղած հակասությունը: Այդ տեսակետից ի՞նչ հակասություն կարող է լինել անհատի և հասարակության միջև, երբ հավելյալ արդյունքի գոյությունն անհրաժեշտ է և՛ հասարակությանը, և՛ անհատին:

Անձնական և հասարակական տնտեսական շահերի միջև հակասության առաջացման հիմքը համարյա նույն դիրքերից է բացահայտում Զ. Դուդիչը, գտնելով, որ ռեսու աշխատանքի բաշխման տնտեսական օրենքի իրացման կապը հասարակական սպառման ֆոնդերի ձևավորման և օգտագործման օրենքի հետ՝ արտահայտում է անձնական և հասարակական շահերի հակասությունը զարգացած սոցիալիզմի պայմաններում¹⁹: Այսինքն, հեղինակն անձնական և հասարակական տնտեսական շահերի միջև հակասության հիմքում դնում է ըստ աշխատանքի բաշխման տնտեսական օրենքի իրացման միջոցով աշխատողներին հատկացված անհրաժեշտ արդյունքի մի մասի և մյուս՝ հասարակական սպառման ֆոնդերի ձևավորման համար օգտագործվող մասի միջև եղած հակասությունը:

Այս տեսակետները, որոնք վերաբերում են անձնական և հասարակական տնտեսական շահերի միջև հակասությունների առաջացման հիմքերի բացահայտմանը, համոզիչ չեն: Իսկ ո՞րն է տնտեսական շահերի միջև հակասությունների առաջացման օբյեկտիվ հիմքը: Հասարակության զարգացման ընթացքը մեզ համոզում է, որ մարդկանց պահանջմունքների բավարարման շրջանակները՝ լինեն դրանք նյութական, թե հոգևոր, միշտ ունեցել են ու կունենան անընդհատ աճի միտում: Ե՞րբ սկսում ենք իրերը դիտել իրենց շարժման, իրենց փոփոխման... միմյանց վրա ունեցած իրենց փոխազդեցության վիճակում, — գրել է Ֆ. Էնգելսը, — այստեղ մենք իսկույն դեմ ենք առնում հակասությունների: Եարժումն ինքը հակասություն է...²⁰: Այսինքն, շահերի միջև հակասությունները պետք է փնտրել դրանց հիմքը կազմող պահանջմունքների փոփոխության ներքին օրինաչափությունների մեջ:

Պահանջմունքների շրջանակների մեծացման միտումը պայմանավորված է ինչպես արտադրական հարաբերություններով, այնպես էլ արտադրական հարաբերություններում գործող մարդու բուն էությունը (վերջինն ունի զուտ հոգեբանական բնույթ): Տնտեսական շահերի միջև հակասությունների հիմքերի բացահայտման ամենազխտավոր և վճռական գործոնն այն է, որ շահերը պայմանավորող պահանջմունքները փոփոխվում են անընդհատ, իսկ հարաբերությունները՝ համեմատաբար ավելի դանդաղ: Պահանջմունքների անընդհատ փոփոխությունը առկա է հասարակության մեջ և կոնկրետ անհատների պահանջմունքները, որոնց անհրաժեշտ փոխհարաբերությունից էլ ձևավորվում են հասարակական պահանջմունքները: Անհատի զարգացումը կանգ առնել չի կարող, այն անընդհատ պրոցես է, որն արտահայտվում է անհատի պահանջմունքների

¹⁸ «Вопросы экономики», 1979, № 12, с. 85.

¹⁹ З. З. Дудич, *ibid.*, աշխ., էջ 103.

²⁰ Ֆ. Էնգելս, *Անտի Դյուրինգ*, Երևան, 1967, էջ 161:

փոփոխության մեջ: Բայց քանի որ այդ ձևավորված պահանջմունքները (որոնք գոյություն ունեն իդեալական ձևով) չեն կարող իրացվել անհրաժեշտ իրացման պայմանների բացակայության պատճառով, ուստի անհատը հակադրվում է գործող հարաբերություններին, որտեղից էլ ծագում է անհատի և հասարակության հակասությունը: Ընդհանրապես անհատի պահանջմունքները միշտ լինում են ավելի, քան այն հնարավորությունները, որոնց շրջանակներում դրանք պետք է իրացվեն: Եվ հենց այդ ներքին հակասությունն է, որ պայմանավորում է հասարակության զարգացումն ընդհանրապես:

Այսպիսով, տնտեսական շահերի միջև հակասությունների առաջացման հիմքը պահանջմունքների անընդհատ փոփոխությունն է, որոնց իրացման համար անհրաժեշտ են որոշակի հարաբերություններ: Կ. Մարքսը գրել է, որ «բազմապատկված պահանջմունքներն առաջ են բերում նոր հարաբերություններ»²¹, նոր հասարակական հարաբերությունները նախկինում ձևավորված հակասությունների լուծման արդյունք են: Իսկ այդ հակասությունների հիմքում ընկած է այն իրողությունը, որ անհատների նոր ձևավորված պահանջմունքները գործող հարաբերությունների պայմաններում չեն իրացվում: Այս ամենը վերաբերում է տնտեսական շահերի միջև հակասության առաջացման հիմքերին: Խնդրի մյուս կողմը, որ վերաբերում է այդ հակասության առաջացման օբյեկտիվ պատճառներին կամ պայմաններին, աշխատանքի հասարակական բաժանումն է, որը բացահայտել է Կ. Մարքսը: «Աշխատանքի բաժանման հետ միասին, — գրել է նա, — տրված է առանձին անհատի կամ թե առանձին ընտանիքի շահի և իրար հետ շփման մեջ գտնվող բոլոր անհատների ընդհանուր շահի միջև եղած հակասությունը»²²:

Այսպիսով, անձնական և հասարակական տնտեսական շահերի փոխհարաբերության հարցը քննարկելիս հանգեցինք հետևյալին. ա) պահանջմունքները կազմում են անձնական տնտեսական շահի ձևավորման հիմքը, բ) հասարակական շահը արտահայտում է անհատների, սոցիալական խմբերի (որոնց միջև բաժանված է աշխատանքը) փոխկապակցվածությունը, գ) տնտեսական շահերի համակարգում, որպես հասարակական հարաբերությունների շարժման առաջին աղբակ, կարևոր դերը պատկանում է անձնական շահերին, դ) տնտեսական շահերի միջև հակասության առաջացման օբյեկտիվ հիմքը պահանջմունքների անընդհատ փոփոխությունն է:

К ВОПРОСУ О ВЗАИМООТНОШЕНИИ МЕЖДУ ЛИЧНЫМИ И ОБЩЕСТВЕННЫМИ ЭКОНОМИЧЕСКИМИ ИНТЕРЕСАМИ

ОВСЕП АГАДЖАНЯН

Резюме

Первая предпосылка деятельности субъекта—это потребности в независимости от характера производственных отношений. Потребности человека могут быть материальные и духовные. На основе этих потребностей формируются их интересы. Личный интерес—это осознанная потребность. Из необходимых отношений субъектов (которые имеют свои интересы) формируются общественные интересы. Общественный интерес—это взаимозависимость субъектов и социальных групп, между которыми разделен труд. В системе экономических интересов, как первый импульс для действия общественных отношений, главная роль принадлежит личному экономическому интересу. Личные и общественные экономические интересы находятся в диалектическом взаимоотношении. Объективная причина возникновения противоречия между этими интересами—это постоянное изменение потребностей.

21 Կ. Մարքս և Զ. Էնգելս, Ընտիր երկեր, հ. 1, էջ 27:

22 Կ. Մարքս և Զ. Էնգելս, Ընտիր երկեր, հ. 1, էջ 32: